Դարերի մշուշում, կանգնած էր
խաչը հին,
Բյուր-բյուրավոր մարդիկ, այդ
խաչի ոտքի տակ,
Ու ես էլ նրանց հետ՝
Երջանկություն գտա:

Խաչը հին, խաչը հին,
Անշուք և մենավոր,
Ուժ ունի, ուժ ունի,
Կարող է Նա այսօր,
Բժշկել մեր սրտերն
Խոցված, վիրավոր,
Եվ բացել երկնքի ճամփան
փառավոր:

Մեղավոր աշխարհից
Մինչ երկինք հեռավոր,
Անթափանց ու խավար,
Անդունդ կա ահավոր,
Խնդրում եմ հավատա
Աստծո Սուրբ Խոսքին,
Երկրից երկինք տանող
Կամուրջն է Խաչը հին:

Խաչը հին, խաչը հին,
Անշուք և մենավոր,
Ուժ ունի, ուժ ունի,
Կարող է Նա այսօր,
Բժշկել մեր սրտերն
Խոցված, վիրավոր,
Եվ բացել երկնքի ճամփան
փառավոր:

Հեռավոր լեռներում,
Մերկ սարի գագաթին,
Դարերի մշուշում,
Ես տեսա Հիսուսին
Իր խոցված ձեռքերից,
Սուրբ Արյունն էր հոսում,
Եվ չքնաղ աչքերից,
Աստծո Սերն էր խոսում:

Խաչը հին, խաչը հին,
Անշուք և մենավոր,
Ուժ ունի, ուժ ունի,
Կարող է Նա այսօր,
Բժշկել մեր սրտերն
Խոցված, վիրավոր,
Եվ բացել երկնքի ճամփան
փառավոր:
Եվ բացել երկնքի ճամփան
փառավոր...